

ՊԱՅՄԱՆՔ

Յարեհանդիս Կ. Պոլսոյ մը 8 Մէծ.
Վաւառաց 10 Մէծ.
Վեդամեայ Կ. Պոլսոյ 4 Մէծ.
Վաւառաց 5 Մէծ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ.
Յանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 8 ՀՈՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպական լրագրաց ուշը գրա-
ւող խնդրոց առաջինն է այս միջո-
ցիւ Արեւիմ կոմսին բանտարկութիւնը:
Այս անձը Պ. Պիսմարքէն ետեւ
Գերմանիոյ քաղաքացիացաց առա-
ջինը կը համարուի, եւ ըստ բաղ-
ման Պիսմարքի հաւասարն իսկ: Իւր
բանտարկութիւնը, մանաւանդ ա-
ռանց դատաստանի բանտարկութիւ-
նը՝ խիստ տխուր տպաւորութիւն մ'ը-
րաւ ոչ միայն Գերմանիոյ, այլ և հա-
մայն Եւրոպիոյ մէջ:

Բանտարկութեան պատճառն, ինչ-
պէս արդէն հեռագիրը ծանուցած
է, խել մը գետնական թուղթեր
քովը պահած ըլլալն է, զորս Պ. Պիս-
մարք կը պահանջէ անկէ, և նա չու-
ղեր տալ:

Թուղթերուն սլարունակութիւնն
յայտնի չէ, բայց կըսուի թէ շատ
փափուկ գաղտնիքներ կան անոց մէջ,
և այս պատճառաւ Պ. Պիսմարք մտեր-
մաբար Արեւիմ կոմսին ուղղած է Հռոմի
կամ փարիզի դեսպանութեան ժա-
մանակ, խնդրելով որ դեսպանատան
ստորակարգեալ պաշտօնեայնէն
ծածուկ մնան: Արեւիմ կոմսն ալ զա-
նոնք իբրեւ առ ինքն ուղղեալ մը-
տերմական նամակներ՝ իւր անձնա-
կան սեփականութիւնը կը համարի և
չուղեր ետ տալ կամ տէրութեան
յանձնել:

Միւս կողմանէ կառավարութիւնն
ալ կը պնդէ թէ նամակները՝ թէ և
մտերմաբար գրուած, բայց դեսպանին
վարչական պաշտամանը վերաբեր-
եալ ըլլալով անձնական սեփականու-
թիւն չեն կրնար համարուիլ, այլ
վարչական թղթոց կարգ կանցին,
զորս Պ. Պիսմարք անձամբ գրեր է,
որպէս զի պարունակութիւնն ուրիշ
պաշտօնատարը չիմանան: Բայց այս
պարագային մէջ ալ կրնայ հարցուիլ
թէ Արեւիմ կոմսը կրնա՞ր դեսպա-
նատան դիւանին մէջ դնել այն նա-
մակները, քանի որ ծածուկ պահե-
լու պարտականութիւն ունէր:

Այս տարաձայն կարծեաց մէջ ճըշ-
մարտութիւնը դատաստանական ա-
տենին վճռէն միայն կրնայ սպասուիլ:
Եթէ ատենը կազմող դատաւորնե-
րն որ և է ճնշումէ կամ նկատումէ
ազատ՝ արգարութիւնը միայն վճռ-
ուելու մտադիր ըլլան:

Խնդրոյն եւութեան վրայ այսպիսի
տեղեկութիւն տալէ ետեւ դանք Գեր-
մանիոյ քանի մ'ազատամիտ լրագ-
րաց խորհրդածութիւններուն:

Մակընտրուիլի Յայթուիկ լրագի-
րն հետեւեալ խորհրդածութիւնը
կընէ.

«Անշուշտ կարեւոր յայտնութիւնք

կ'սպասուին Պէրլինի մէջ և այս պատ-
ճառաւ այս ընթացքը կը բռնուի:
Անշուշտ խորհրդութիւն չէ՞ մեր պետու-
թեան մէջ, որ մինչև ցարդ իր պաշ-
տօնէից փորձեալ պարկեշտութեան
մէջ կը գտնէր միշտ իւր ամենէն ա-
մուր սինը, տեսնել, որ քիչ մ'ա-
ռաջ կայսերական ամենէն կարեւոր
և փափուկ պաշտօններ վարող անձ
մը՝ թէ պաշտօնական թուղթեր պա-
հած է ի փնտա ազգային աշխարհա-
վարութեան: Ստուգիւ այս բանտար-
կութիւնը ցաւալի լոյս մը կը ափռէ
մեր գործերուն վրայ, որք այստա-
րուստ անկողանք կերելն, բայց ի
ներքոյ կատարեալ խմբման մէջ են:

Իրէօզ Յայթուիկ լրագիրն ալ
հետեւեալ խորհրդածութիւնը կընէ.

«Ամեն մարդ, գիտաւորապէս այն
ակումներուն մէջ՝ ուր Բրուսիական
վարչութեան հին աւանդութիւննե-
րը դեռ կենդանի են, դո՛ւ կըլլայ
արտաքին գործոց նախարարութեան
և վարչական դեսպանի մը մէջ ծագած
վէճը դատաստանի յանձնուած տես-
նելով: Եթէ Արեւիմ կոմսն ստուգիւ
յանցաւոր է, արգարութիւնը կ'պա-
հանջէ որ պատիժը կրէ: Բայց ամ-
բաստաններոյ բանտարկութիւնը գոր-
ծին կարեւորութիւնը կաւելցնէ, և
ամեն մարդ ակամայ կը հարցնէ թէ
ինչ է այդպիսի ծանր խտուրթեան մը
պատճառն: Թանցանքին ծանրութիւնը
չկրնար ըլլալ, վասն զի օրինադիրքին
սահմանած պատիժը համեմատաբար
ոչինչ է: Այսպիսի յանցանքի մ'առջև
փախտանքն երկուդ ալ չկրնար ըլլալ:
Արեւիմ կոմսն պէտք մտադրու մը համար
նմանապէս չկրնար վաղցուիլ թէ
Արեւիմ կոմսն՝ ազատ մնալէն օգուտ
քաղելով՝ գործը միջութեան մէջ պա-
հելու աշխատի: որովհետեւ ինք չու-
րանար նամակներ ստացած ըլլալն,
այլ միայն ետ տալ չուղեր: Այս պատ-
ճառաւ ամեն մարդ կ'ընթադրուի թէ
մէջ կիցնայ և դատաստանէն կ'սպա-
սէ զօրաւոր յայտնութիւններ տեսնել
ամբաստանելոյն դէմ: Ուստի դատը
վատարկողը քաղաքական մեծ յաղ-
թութիւն մը պիտի ընէ:»

Վիեննայի Բուէն լրագիրը կընէ
թէ Անտարալ կոմսը արամադիր է
ճանչելու թէ՛ Բուսմանիոյ և Սերվիոյ
իշխանութիւնք օտար տէրութեանց
հետ ուղղակի գաշնադրութիւններ
կնքելու իրաւունք ունին, և թէ արդէն
այս մասին Գերմանիոյ աշակցութիւնն
ապահոված, և Գաղղիոյ ու Ռուսիոյ
ընդդիմութեանց առաջնէն առնու-
համար ալ բանակցութեան մտած է
անոնց հետ:

Հնդկաստանի Անդրիական լրագ-
րաց խօսքին նայելով, Չինացիք՝ իւ-
րեւրա և Սինսան գաւառները Գաշ-

կարի Եւրոպայ խանին ձեռքէն ա-
ռեր են:

Չինական զօրքերն անդրիացի ըս-
պայի մը հրամատարութեան ներքեւ
են:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 16 հոկտ.

Անգլիական պատերազմի նաւու մը
հրամանատարը Ֆիշի կղզիները գրաւեց
յանուն թագուհւոյն, և Բրիտանական
Դրօշակը վարդեց հոն:

Պէրլին 16 հոկտ.

Երէկ երբոր դատաստանական պաշ-
տօնեաց մ'Արեւիմ կոմսուհոյն Պօստի մը
պարիզի պալատին մէջ խուզարկութիւն
կընէր, դիպուածով հրդեհ մը պատահե-
ցաւ պալատին մէջ, և առանց մեծ վնաս
պատճառելու՝ չուտով մարեցաւ:

Փարիզ 16 հոկտ.

Քարլոսեանց հեռագիրը սուտ կը
հանեն քարլոսեանց վաշտերու հնազան-
դութիւնը, որք Մատրիտի մէջ կը ծանուց-
ւին:

Նիւ Օրլէան 13 հոկտ.

Պուէնտ—Այդտի յեղափոխութիւնը
վիժեցաւ:

Լոնտոն 16 հոկտ.

Ռուսիոյ կայսրուհին հոս հասաւ:

Փարիզ 16 հոկտ.

Սպանիոյ և Օրլէանի խնդրոց վրայ
ճըբաղ դուրսին Միայուն յանձնաժողովոյ
մէջ տուած բացատրութիւնները դո՛ւս-
ցուցին են:

Վիեննա 16 հոկտ.

Արքունիքն Հունգարիա պիտի կենայ
մինչև տարւոյն վերջը:

Պէրլին 16 հոկտ.

Արեւիմ կոմսին զօրանքին տունը խու-
զարկութիւն եղաւ և 16 սնտուկ զըրա-
ւեցան: Այս գրաւումն ընող պաշտօնէին
անխուճմունքեամբ փոքրիկ հրդեհ մ'ալ
պատահեցաւ:

Մատրիտ 16 հոկտ.

Քարլոսեանց քանի մը նոր պարաւ-
թիւններ կը ծանուցուին:

Պէրլին 17 հոկտ.

Արեւիմ կոմսը շատ ցաւագար է:
Կառավարութիւնն այս միջոցն Սլոն-
—Լօրէնի նկատմամբ օրէնք մը կը խմ-
բագրէ, որոյ նպատակն է երեսփոխա-
նութիւն մը տալ յիշեալ գաւառին, և իւր
ներքին գործոց վարչութիւնն անոր յան-
նել:

Լոնտոն 17 հոկտ.

Ամերիկայի լրագիրը Փարիզէն հեռա-
գիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ
Գաղղիոյ կառավարութիւնն Սպանիոյ ծա-
նուցարարին վրայ չըջարեական մը պիտի
ուղղէ տէրութեանց:

Փարիզ 18 հոկտ.

Գաղղիոյ կառավարութիւնը Պիլէնեան
դաւառաց մէջ Քարլոսեանց լնակութիւ-
նըն արգիլելու համար սուտ հրահանգ-
ները նորոգեց:

Բօ դաւառին կառավարիչը պիտի
փախուի:

Կը հաւատեն թէ ճըբաղի դուրսն
Սպանիոյ ծանուցարարին ամեն կէտերուն

ՊԱՅՄԱՆՔ

Գուրա գացած լրագրաց հանրու-
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պօ-
լիս, Չինիլի խան, Մաթիսի գրասեն-
եակը:
Համար ծախքը չվճարուած նոս-
ժակ չընդունուիր:

վրայ գահացնել բացատրութիւններ տը-
ւաւ Սպանիոյ դեսպան Պ. Արմիլիօ:
Պէրլին 17 հոկտ.

Խաղիոյ թագաւորին ի Պէրլին ու-
ղերութիւնը զալ տարուան համար կը
ծանուցուի:

Պէրլին 18 հոկտ.

Արեւիմ կոմսին վրայ տէրութեան դէմ
գաւառանութեան ամբաստանութիւն կայ:

Լոնտոն 17 հոկտ.

Օմ.	Քօն.	45 13/16
ժախ	1865	70 3/8
»	1869	54 1/8
»	1871	—
»	1872	84 1/4
»	1873	54 7/8
Նոր փոխառութիւն	2	
Անգլ. քօն.	92	13/16

Լիվերքուլ 17 հոկտ.

Բամպակ Միտլինկ—Օրէան 8—3/8
» Ֆայր Տօլերաճ 5 1/4—3/8
Մախուած 10000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Դուրք մայրաքաղաքի Պարսից
դեսպանին հետ համաձայնութեամբ
Թուրքիա գտնուող Պարսիկ հպատա-
կացադպրութեան խնդիրը վերջնա-
կան կերպիւ կարգադրելու բաղձալով
որոշեց խառն յանձնաժողովներ կազ-
մել թէ՛ Կ. Պօլսոյ և թէ՛ գաւառագը-
լուս քաղաքացի մէջ, որպէսզի Պարսիկ
հպատակաց ազգայնութեան իրա-
ւունքները քննեն, ստուգեն, և ա-
ռանց ցանկը շինելով կայսերական կա-
ռավարութեան զրկեն, որպէս զի
անոնց վրայ հիմնելով՝ ներկայացուց
ամեն խնդիրները Պարսից դեսպա-
նատան հետ համաձայնութեամբ կար-
գադրէ:

Խառն յանձնաժողովները պիտի
բաղկանան տեղական կառավարու-
թեանց ժողովի երկու անդամներէ,
կառավարութեան թարգմանէն, Պար-
սից հիւպատոսէն և նորա թարգմա-
նէն:

Մայրաքաղաքի մէջ ջրանկիրաց
դուռը մը կազմուել համար Հունգա-
րիայէն Կ. Պօլսի հրաւիրեալ Ձեքէմ-
յէ կոմսն ուրաւ իրիկուն Կ. Պօլս
հասաւ:

Պէնկաղիէն եկած վերջին լուրե-
րուն նայելով ժամտախտը գրեթէ բո-
լորովին գաղթած է, հետեւաբար
Պէնկաղիի քառանթինային տեսչու-
թիւնը քիչ օրէն մաքուր անցագիր
տալ պիտի սկսի:

Մայրերու անգղաշուրթեան նոր
օրինակ մը:

Կերակի օրը Եէնի գալուէ թաղը
երեք տարեկան հայ տղեկ մը, մայ-
րը վարը դարձի դրաղած ժամանակ,
պատուհանէն վար կ'ընկնէր՝ անմիջա-
պէս մեռաւ:

Կը յիշեն ընթերցողք թէ այսպիսի դէպք մ'ալանցեալ չարթու Սաբրեար պատահեցաւ, ուրիշ անխա-հեմ մօր մ'անգղուշութեամբ ։

Կայսերական կառավարութիւնն 1876ին Ամերիկայի Ֆիլադելֆիա քա-ղաքը բացուելիք Զոնիքերական ար-ւեստահանդէսին [մասնակցիլ ուղե-լով, առեւտրական գործոց պաշտօ-նատան մէջ յանձնաժողով մը կազ-մեց, որպէս զի Թուրքիայէն զրկուե-լիք արտագրութեանց և նիւթոց ցանկը շինէ ։

Կայսերական կառավարութիւնը բազմաթիւ առաջատանաւեր վար-ձելով վառնա զրկեց, որպէս զի Ա-նատուրի սովեալ ժողովրդաց համար ցորեն բերեն ։

Անցեալ շաբթու Պէշիկթաշ յոյն աղջիկ մ'առեւանգեցաւ իւր ծնողաց տունէն և չկրցաւ գտնուիլ ։

Պէշուքի Սուրիա լրագիրը կը ծա-նուցանէ թէ Համայն մէջ կին մը հը-րէշ մը ծներ է, որոյ մարմինը թա-ւամաղ մորթով ծածկուած, գլուխն ալ արջու գլխոյ կը նմանի եղեր ։ Քան և չորս ժամ ապրեւէ ետեւ մե-ւեր է ։

Կիրակի առաւօտ ժամը 10ին մի-ջոցները Ղալաթիոյ շխտակ ճանրան կանգնեցաւ զաւանդակ մը խանութէն հը-րէշ եղեւիլ՝ երեք խանութ, ողբից քմպեւեաց գործարան մ'և երկու տուն այրեցան, ամենն ալ կէս քա-լուկիլ ։

Ե. Ջ. Գ.

Մեր դատաւարնակ արդոյ բա-ժանորդներէն կը խնդրենք որ լը-րագրոյ տարեկանը զրկելու բարե-հաճին ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻՆ	
7 հոկտ. երկուշաբթի իրիկուն	50.16
8 հոկտ. երեքշաբթի առաւօտ	
բացուեցաւ	50 7
կէս օր	49 37
Կ. Պօլիս 7 հոկտ.	
Սօսիթէ ժէնէրայի բաժինը Անգլիոյ 7 26	
« Փոխանակութեան » 4 39	
Կ. Պօլիս Պանքային » 5.22	
Քրէստի ժէնէրայ » 11 26	
Քրէստի Սթրոմ-Թուրք	—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՈՄԱՐ ԸՆՏԱՆԿԱՆ

1874—1875 թ.

ԱՌԱՋԻՆ ՆՈՒԵՐ ՀԱՅ ՏԻԿԵՆՆՅՅ

ՀԱՏՈՐ Ե.

Աշխատեցաւ Տ. Սթրոմ-Կէ Ա. Երէշեանց

Թիֆլիս 1874

Վիճակագրութիւն անուանեալ գիտութիւնը միմիայն ներկայ դա-րուն ծնունդ ըլլալով կարծ միջոցի մը մէջ այնչափ յառաջագնացութիւն ը-րած է, որ այսօր ամեն կրթեալ ազգ-իւր բարոյական և նիւթական ոյժը համեմատած է այլոց հետ Տակաւին միմիայն անկիրթ, յետագէմ և ան-նըշան ազգերը զուրկ են վիճակագր-ութենէն. աստիք նման են այն դեր-գատանին, որ չգիտէ իւր զաւակաց որքանութիւնը, իւր անգամաց պի-տոյքը, իւր առնելիք տալիքը ։ Մեր ազգութիւնն ալ տակաւին զուրկ է վիճակագրութենէն ։ Մենք չգիտենք թէ այսօրուան օրս ամեն թէ նը-ւաղելու վրայ ենք. թէ կաճիլը—արդեօք ո՞ր աստիճանի է մեր աճու-

Երկաթուղեաց հին նոր	Յոր	124 1/2
Փոխ. 1863	»	342
» 1865	»	347
» 1869	»	273
» 1872	»	83
» 1873	»	239
Թրամուէլ	Օսմ. իւր	4 73
ԲՆ.ՔԱՅԻՐ ԳՐԱՐԱՆ		
7 ՀՈԿՏԵՄԲԵՐ		
Անգլ. լեռն. զուրկ	409.45	
Ն. Տօր. և Սակի »	87 8	
Եւր. արալ Սուս »	89 5	
Գ. արմից »	54. 17	
Հինց ֆրանք »	—	
Հինգից »	104 25	
Պրիմ »	127 35	

Ա. Ջ. Գ. Ա. Յ. Ի.

ԻՐԱՆԻՆԻՔ ԵՒ ՊԱՏԻՔ

Տիեզերական արգարութեան այս մեծ սկզբունքը, որ մեր ազգային Սահմանագրութեան հիմն է, մեր մէջ տակաւին լաւ ըմբռնուած և կանոնա-ւոր գործադրութիւն գտած չէ ։

Սահմանագրութիւն սենինք, կը-սենք, կը պարծինք, կը պտանք, կը պուշանք, անոր տառին և ուղղոյն վրայ կը կուռնք, ազգը տակին վե-րայ կը կուռնք, իսկ անոր ամենէն էտ-կան սկզբունքը, կենսական ուղին, հի-մը նկատողութեան չենք առնուր, և այսպէս մեր Սահմանագրութիւնն այսօրուան օրս անսկզբունք օրէնք մը, անհոգի մարմին մը, անհիմն չենք մը-րած ենք, որոյ միջոցաւ կը յուսանք ազգը վերանորոգման ու յառաջդի-մութեան շաղի մէջ դնել — Յոյս մը, որ 13 տարին է ի վեր չկրցաւ պրակ-ւիլ և այս ընթացքով յաւիտեան պը-սակուելիք չունի ։

Սահմանագրութեան նոր հաս-տատուած ժամանակ, այս ամենա-կարեւոր կէտը այն է իրաւանց եւ պարտեաց փոխադարձութեան կանո-նաւորման խնդիրը ժամանակին վար-չութեան առաջին հոգեւոր մին ե-ղած էր. յանձնաժողովներ կազմուած, ծրագրեր պատրաստուած, և ուռա-ջարկութիւններ ներկայացած էին Ընդհ. Ժողովոյ, բայց ազգային իւր-ւութիւններ, վարչական փոփոխու-թիւններ, Սահմանագրութեան դա-դարումներ, և այլն և այլն վրայ դա-ւով ետ մնացել էին ։

Սակայն 1863ին Սահմանագրութիւ-նը, որ իր վերաքննութեան պայմա-

նաժամն անցունելով մինչև այսօր գործադրութեան մէջ է, երեսփո-խանական ընտրողութեան և ընտրե-լիութեան պայման առ նուազն 75 զրշ տուրք սահմանած ըլլալով, վարչու-թիւնն այն ժամանակ որոշեց իր թեր-հաշիւ 75 զրշ տուրք հաւաքելու ուստի և առաջին անգամ թաղերուն մէջ ցուցակներ շինուելով եւ այդ թեր-հաշիւ տուրքը հաւաքուելով երես-փոխանական ընտրութիւնները կա-տարեցան ։ Այնուհետեւ վարչութիւ-նըն սկսաւ 75 զրշ տարեկան թեր-հաշիւ տուրք հաւաքել ընտրողնե-րէն յատուկ հաւաքչաց ձեռամբ. և որովհետեւ կանոնաւոր հիման մը վե-րայ հաստատուած չէր, և առաւել քուէ դնելու կերպարանք մ'ունէր՝ քան թէ ազգային պարտականու-թիւն կատարելու, շատեր դժգո-հութեամբ կը վճարէին, շատեր ալ ընաւ չէին ընդունելու Սոք վրայ վար-չութիւնը ճարպիկ միջոց մը խորհե-ցաւ, այն է՝ չվճարողներուն մէկ գոր-ծը Պատրիարքարան կնշարուն պէս՝ պահանջել և ստանալ այդ թերհա-շիւ տուրքը. անկանոն, անիրաւ և միանգամայն անպատեւ միջոց, որով-հետեւ Պատրիարքարանի սարգիստայ-նին մէջ բռնուողները միայն վրճա-րելու կը հարկադրին, իսկ չբռնուող-ները, որ խիստ մեծագոյն մաս կը կազմեն, աղատ կը մնան տուրք վը-ճարելէ ։

Իսկ իրաւանց գործադրութեան դաւով, տուրք վճարողներն ու չվը-ճարողներն իրարու հետ չփոխեցան, թաղերուն մէջ առաջին անգամ պատ-րաստուած ցուցակները, ժամանակ անցնելով, և վախճանմանց, տեղա-փոխութեանց և այլ պատճառներով անպիտանացան, 1869ին հաստա-ուած սահմանագրական գործադ-իր յանձնաժողովն ալ ընտրողական 75 զրշ թերհաշիւ տուրքը շարաթը 60 փարա կամ ամիւր 6 1/2 զրշ վճարե-լու ենթագրական կարգով թեան վը-րայ հիմնելով, և վճարումը պատրի-արքարանի սարգիստայնին յանձ-նելով, պարտեաց և իրաւանց սկզբ-ունքը կատարեալ չփոխութեան վիճակի մէջ ինկաւ, այնպէս որ, պարտքը վճարողն ու չվճարողը հա-ւասար իրաւունք վայելել ու գոր-ծադրել սկսան. և որովհետեւ վեր-

ջինները մեծամասնութիւն կը կազ-մեն միշտ, ընտրական իրաւունքը բովանդակապէս ստոնց ձեռքը մնաց ։

Այս անկարգ և սպորէն վիճա-կը չէր կրնար շարունակել ։ Գժգո-հութիւնն օր քան զօր աւելնալ սկը-սաւ թաղերուն մէջ, պարտքերնին վճարող սակաւաթիւ ընտրողներէն շատերն իրենց քուէին անգոր ըլլա-լը տեսնելով, քուէարկութենէ հըրա-ժարիլ որոշեցին, ոմանք ալ տրտունջ բառնալ և բողոքել սկսան՝ ծանու-ցանելով վարչութեան թէ այսուհե-տեւ ընտրողական տուրք անունով ի-րենցմէ պահանջուած 75 զրշ թերհա-շիւը չպիտի վճարեն ։

Սոք վրայ վարչութիւնն ալ ո-րոշեց որ այսուհետեւ երեսփոխանա-կան ընտրութեանց մէջ՝ 75 զրշ թեր-հաշիւ տուրքն իրօք վճարած անձինք միայն քուէ տան ։

Այս որոշմամբ երեսփոխանական ընտրողութեան իրաւունքը Սահմա-նագրութեան 65րդ յօդուածին պա-հանջման համաձայնած կըլլայ. բայց հոս ուրիշ նկատելիք կէտ մը կը մը-նայ ։

Շատեր կան, որք կա՞մ անտար-բերութեամբ, կա՞մ ուրիշ որ և է պատճառաւ քուէ տալու փոյթ չու-նին, հետեւաբար ոչ 75 զրշ թերհա-շիւ տուրք կը վճարեն, ոչ ալ քուէ կուտան. հետեւաբար թաղերուն մէջ երեսփոխանական ընտրութեան մաս-նակցողաց թիւը վերջին ծայր կը նը-ւաղի. Այս անպատեհութեանց առա-ջըն, ըստ մեզ, ուրիշ բանով չկրնար առնուիլ, բայց եթէ ազգային ընդ-հանուր տուրք ժամ առաջ հաստա-տելու ջանալով, որպէս զի ամեն ան-հատ իւր կարողութեան ներած տուր-քը տարուէ տարի չվճարելով, իւր ընտրողական իրաւունքն ալ պէտք եղած ժամանակ կանոնաւորապէս գործադրելու հրաւիրուի ։

Ս. Պատրիարք Հայրը վերջին Ընդհ. Ժողովոյ մէջ ազգային տրոց հաստա-տութեան հարկին զգացուց. այդ-հարկն եթէ ուրիշ նիւթական պատ-ճառներ ունի, այս ալ բարոյական պատճառ մ'է, աւելի կարեւոր, և ըստ մեզ աւելի ստիպողական. ուստի պէտք է որ ժամ առաջ Ընդհանուր Ժողովոյ ատեանն հանուելով իւր օ-րինական տնօրէնութիւնն ստանայ ։

ւած պէտք է ըլլայ ազգային վար-ժարանաց խնդիրը, և ասոր համար վիճակագրի մեծ պէտք կայ. Անտա-րակուսելի է որ այդպիսի գործի մը ձեռնամուկ լինելը միմիայն ազգին բարձրագոյն վարչութեան կը վայել ։

Ամբողջ Հայ ազգութեան և նորա գլխաւոր վարչութեան կեդրոնն Էջ-միածնայ Ս. Աթոռնէն ։ Ըսել թէ Ս. Էջմիածնայ մէջ գտնուող վարչու-թեան գործն է մեր ընդհանուր վի-ճակագիրը կազմել և անկէ օգուտ քաղել ։ Սակայն յաւօք սրտի կ'տես-նենք, որ մեր Մայր Աթոռն ամենեւին այս մասին հոգ տարած չունի ։ Զը-գիտէ մեր ընդհանուր թիւը, մեր ա-ճելու և նուաղելու աստիճանը, մեր նիւթական և բարոյական հարստու-թեան չափը Ոչ միայն չգիտէ ազգա-յին ուսումնարանաց, աշակերտաց և ուսուցչաց ընդհանուր թիւը, այլ և որոշ տեղեկութիւն մ'անգամ չունի Հայ կղերին քանակութեանը, նոցա ապրուստին միջոցներուն, ազգային կամ եկեղեցական կարուածոց և ա-նոց երաւոյնք ։ Էջմիածնայ Վարչու-թիւնն ոչ միայն ժողոված չէ այս կա-րեւոր տեղեկութիւններն, այլ և մինչև այսօր աշխատած չէ ծանօթացնելու ազգիս նոյն իսկ Ս. Էջմիածնայ հո-

սոյթն և վանքին երաւոյնքը. Քանի որ ամեն ուրեք յանուն և ինչպատ Ս. Էջմիածնայ թաղախ կը պտտի եկեղեցեաց մէջ, պէտք է որ ամեն Հայ գիտնայ Վեհ. կաթողիկոսին, Սի-նօքին և նոյն իսկ Միաբանութեան տարեկան հասոյթն ու պէտքը ։ Վը-ճարողին իրաւունքն է միշտ գիտ-նալ թէ ո՞ր կերթայ իւր տուած ըս-տակը. Բայց և ոչ ոք գիտէ թէ Ս. Էջ-միածնայ այսօր պարտք ունի արդեօք թէ պատրաստ գրամ ։ Մեզ յայտնի է որ Ռուսիոյ Հայ պարեւորական հը-րատարակութիւնը քանիցս առաջար-կեցին Ս. Էջմիածնայ պաշտօնական Արարատ ամառքին, որ՞՞ Ս. Աթոռն տարեկան Պիւտեճն հրատարակէ, բայց՝ ըստ վաղեմի սովորութեան Ս. Էջմիածնայ, այս առաջարկութիւնն ընդունելութիւն չգտաւ ։

Սակայն քանի որ ազգային վիճակ գրութեան պէտք կայ և Ս. Էջմի-ածնայ կեդրոնական վարչութիւնը չուզեր կամ անկարող է այդ պէտքը լցնելու, ամեն անհատի կողմէ այ-մասին եղած փորձ, իրեւ ծառայու-թիւն ազգիս, հարկաւ ուրախութեամբ կընդունիմք ։

Մինչև այսօր մեզ յայտնի եղած-ազգային վիճակագրական փորձերէն

3 45 20 Պէտօլւթտէրէէն Թառ. Պէլթօզ, Երաշտ, Գաղն. Լ

14 35 2 Գաղաթ. Գուղի, Պէյլէրպէյ, Չէնկէլ. Վանի:

Աւելի մանրամասն տեղեկութեան համար պէտք է դիմել առ
Բրահմաբար Գործակալ Գործակալ
ՀԵՐՄԱՆ ՀԷԼԳԻՆԿԻ ԱՂԵՔԱՄԱՆԴՐ ԲԵՐՄԷՋ
ի Ղալաթիա

Նախորդաց և այս քաղաքիս ընդհանուր

LLOYD SUISSE
LՈՅՏ ՍՈՒՍԻՅԷ